«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Արձանագրություն թիվ 3
12.10.2023թ.

1. **Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ ՀԱԱՀ-ում իրականացվող գիտական թեմաների ամփոփիչ հաշվետվությունների քննարկման և հաստատման հարցի վերաբերյալ**

1.1. Հաստատել գիտական թեմաների ամփոփիչ հաշվետվությունները և երաշխավորել ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե ներկայացնելու համար.

- 21APP-2D015 ծածկագրով «Կառավարման և ավտոմատացված համակարգով բարձր արտադրողական այգեգործական հողամշակ մեքենայի պատրաստում և արտադրական փորձարկում» գիտական թեմա (ղեկավար՝ Արթուր Ալթունյան),
- 21T-4C052 ծածկագրով «Հողի կառուցվածքային մոդելավորմամբ հողամշակ մեքենաների բանող օրգանների պարամետրերի հիմնավորում և հողամշակման որակական ցուցանիշների բարելավում» գիտական թեմա (ղեկավար՝ Դանիել Պետրոսյան),
- 21T-4B008 ծածկագրով «Լանջերի հողի մշակման նոր էներգախնայող տեխնոլոգիայի և համապիտանի ագրեգատի մշակում և ներդրում» գիտական թեմա (ղեկավար՝ Պարգև Տոնապետյան),
- 21T-4A007 ծածկագրով «Հավերի էյմերիոզի տարածվածությունը Հայաստանի ֆերմերային և անհատական տնտեսություններում» գիտական թեմա (ղեկավար՝ Լիանա Գրիգորյան),
- 21T-4B070 ծածկագրով «Հասկավոր հացաբույսերի (գարի, հաճար, ցորենաշորա) նոր սորտերի մշակության արդյունավետության գնահատումը կանաչ գյուղատնտեսությունում» գիտական թեմա (ղեկավար՝ Համլետ Մարտիրոսյան),
- 21T-4D074 ծածկագրով «Բույսերի գենոտիպի պահպանություն ԴՆԹ-բանկի ստեղծմամբ» գիտական թեմա (ղեկավար՝ Մանվել Բաղալյան),
- 21T-4D091 ծածկագրով «Տեղական բուսական հումքից սննդային հավելումների և բարելավիչների ստացում» գիտական թեմա (ղեկավար՝ Նարինե Հովհաննիսյան):

1.2. Հանձնարարել 21APP-2D015 ծածկագրով գիտական թեմայի ղեկավար Ա. Ալթունյանին միջշարային տարածությունները փխրեցնող մեքենայի աշխատանքի հնարավորությունները ցուցադրելու համար համագործակցել Հայաստանի Խաղողագործության և գինեգործության հիմնադրամի, մեքենաշինական կազմակերպությունների հետ:

1.3. Հանձնարարել մարքեթինգի բաժնի ղեկավար Մ. Ղարագյոզյանին հաշվարկել միջշարային տարածությունները փխրեցնող մեքենայի ինքնարժեքը և ուսումնասիրել մեքենաշինական կազմակերպություններին ներկայացնելու հնարավորությունները:

1.4. Հանձնարարել 21T-4B008 գիտական թեմայի ղեկավար Պ. Տոնապետյանին լանջերի հողի մշակման համապիտանի ագրեգատի աշխատանքի արդյունավետությունը փորձարկել Բալահովիտի ուսումնափորձնական տնտեսության պայմաններում:

1.5. Հանձնարարել լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Ս. Ավետիսյանին գիտական թեմաների ձեռքբերումների, նորարարական մոտեցումների մասին իրազեկել հասարակության լայն շրջանակներին:

2. Արմեն Կարենի Սոլոմոնյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ

2.1. ՀԱԱՀ Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Արմեն Կարենի Սոլոմոնյանի թեկնածուական ատենախոսական աշխատանքի թեման հաստատել «Խաղողի սորտի և կլոնի առանձնահատկությունները, դրանց անդրադարձը գինու որակական հատկանիշների վրա» անվանումով՝ Ե.18.01 - «Բուսական և կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությամբ:

2.2. Ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար հաստատել տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարեն Նորիկի Կազումյանին:

3. Սարգիս Հովհաննեսի Գևորգյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ

3.1. ՀԱԱՀ Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի ագրարային էկոնոմիկայի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Սարգիս Հովհաննեսի Գևորգյանի թեկնածուական ատենախոսական աշխատանքի թեման հաստատել «Սննդային թափոնների կառավարման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» անվանումով՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

3.2. Ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար հաստատել տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Վարդան Սամվելի Ալեքսանյանին:

4. «Հացահատիկի ենթահամալիրի զարգացման հեռանկարները և արտադրության ծավալների հիմնավորումը հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերությունների համատեքստում» անվանումով գիտական թեմայի ամփոփիչ հաշվետվության հաստատման հարցի վերաբերյալ

Հաստատել «Հացահատիկի ենթահամալիրի զարգացման հեռանկարները և արտադրության ծավալների հիմնավորումը հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերությունների համատեքստում» անվանումով գիտական թեմայի ամփոփիչ հաշվետվությունը (ղեկավար՝ Վարդան Ալեքսանյան) և երաշխավորել ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե ներկայացնելու համար:

5. ՀԱԱՀ անվանական կրթաթոշակ տրամադրելու կանոնակարգում փոփոխություններ կատարելու հարցի վերաբերյալ

5.1. Ընդունել ի գիտություն:

5.2. ՀԱԱՀ ուսանողներին հատկացվող անվանական կրթաթոշակի չափը սահմանել ամսական 30 հազար դրամի չափով և 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակները տրամադրել ՀԱԱՀ Անվանական կրթաթոշակ տրամադրելու կանոնակարգը փոփոխելուց հետո:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ